

զանակագոյն (զաւա թիւհի = ուղտի մազ), իսկ երբ 2 ժամ՝ բաց սրճագոյն (բաց դայֆայի)»<sup>(47)</sup> :

<sup>47</sup> Ընդհանրապէս Կովկասեան Հայկական գորգերուն սեւը կամ թուխը պատրաստուած է Բուլանըխի պատրաստութեան ձեւով: Այդ պատճառաւ 30-40 կամ աւելի տարիներ վերջ բոլոր այն գորգերը որ այս տեսակ սեւ կամ թուխ ունին կը կորսնցնեն իրենց այդ գոյնով բուրդը, շատ անգամ գորգին վրայ թողնելով վտանգաւոր եւ երբեմն անհասճոյ խորաքանդակ մը: Ու. Ա. Հատուէյ կը գրէ. «շատ մութ թրխագոյնի եւ սեւի համար, երկաթի հրաքարեր կը գործածուին գըլխաւորաբար, հին թէ նոր գորգերու մէջ, բայց դժբախտաբար ներկը փանցնող ազդեցութիւն ունի բուրդին վրայ, այդ պատճառաւ հին գորգերու սեւ կապերը ընդհանրապէս մինչեւ ուղղահայեաց թելերը մաշած կ'ըլլան»<sup>(48)</sup> : Ասիկա, ինչպէս ըսի, Կովկասեան Հայկական գորգերուն յատուկ է :

#### ՍՊԻՏԱԿ

«Սպիտակ ներկելու միջոցները չգիտեն, ընտրում են սպիտակ գոյնի բուրդը»<sup>(49)</sup> :

#### ԶԻԹԱՊՏՂԻ ԳՈՅՆ

«Զիթապողի գոյնի ներկելու համար ընկուզենու թարմ տերեւները ածում են եռացրած ջուրի մէջ, մի քիչ արջասպի (զաճի) ջուր աւելցնում եւ սպիտակ կանձերը ձգում սրա մէջ: Կէս ժամ եռացրելուց յետոյ հանում են, լուանում եւ չորացնում»<sup>(50)</sup> :

#### ԿԱՐՄԻՐ

Արեւելեան գորգերու, մանաւանդ հայկական գորգերու համար սիրուած գոյնն է :

Քրիստոսէ առաջ, 714ին իսկ Սարգոն իր արձանագրութեան մէջ կը յիշէ արարատեան կարմիրով ներկուած հիւսուածեղէններ: Հաւանորէն ակնարկութիւնը ՈՐԳԱՆԻՆ է, մեր հին եւ նոր մատենագրութեան մէջ յաճախ յիշուած Որդան կարմիր :

(47) Անդ, 1913, թիւ 2, էջ 195:

(48) Oriental Rugs, p. 39.

(49) Շատախի շալագործութիւնը: Ազգ. Հանդ. 1913, թիւ 2, էջ 195:

(50) Անդ: